**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-22/7**

ք.Երևան «28» «07» 2023թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Կամո Ամիրխանյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հազարաշեն» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Գ. Հակոբյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 03.05.2022թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-22/7 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 7.5 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ***Համաձայնագրի առարկան***

1.1 Հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 06.07.2023թ.-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություն և լրացումներ, ՀՀ կառավարության 2022թ.-ի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1107-Ն որոշումը:

1.2 Կատարողի կողմից կատարված ծառայությունների դիմաց վճարումները կատարելու նպատակով, կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի N2 հավելվածը՝ «Վճարման ժամանակացույց»-ը, նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.3 Սույն համաձայնագրով նախատեսված վճարումները կիրականացվեն հանձման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ սույն համաձայնագրի կնքման օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-22/7 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 հավելվածը կազմված է 2 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | «Հազարաշեն» ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | 0014 ք. Երևան Պ. Սևակի, 1 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011039790 | Հ/Հ 1150082114211 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 01816381 |
| ՔԿ ծառայության գլխավոր քարտուղարի Պ/Կ Կ. Ամիրխանյան | Տնօրեն Գ. Հակոբյան |
| ------------------------ (ստորագրություն) | ------------------------ /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

«ՀԱԶԱՐԱՇԵՆ» 01816381

Հավելված N 1
«28» «07» 2023 թ. կնքված N 1 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-22/7 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝ | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Ընդամենը |
| 1 | 98111140/2 | ՀՀ ԱՆ «Աբովյան» քրակատարողական հիմնարկի ներքին ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի, սանհանգույցների և բաղնիքների վերանորոգման շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | - | - | 149.000 | 149.000 | 149.000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011039790
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայության
գլխավոր քարտուղարի Պ/Կ
Կ. Ամիրխանյան

(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Հազարաշեն» ՍՊԸ
0014 ք. Երևան Պ. Սևակի, 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500821114211
ՀՎՀՀ 01816381
Տնօրեն
Գ. Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ